

ՄԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹՅՈ՞՞Ն
 Պաշխարհոյ համար
 Տարեկան 12 թր.
 Վեցամսայ 6 »
 Ա՞ սասանակի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսայ 8 »
 Անհրիկայի համար
 Տարեկան 3 թր.
 Վեցամսայ 1.50 »
 ՎԱՆՆԻՒԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Նախնական տղա սուսթին
 երեսին համար 40 սանթիմ
 հ. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սան իմ հ. երեքին
 սան ի սանթիմերու համար
 20 Օլլ զեղը կըլլայ :

ՇԱՌԹՈՒՄ

Նախկ եւ դրա՞ դրկն
 Խմբագրութեան հասցիկն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒ ՉՈՐԵՔԵԱԲԻՒՄ ԵՒ ՇԱՌԹՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Արտասանակի համար ձեռքի
 (20 ՄԱՆԻՒՄ)

ԻՆՔՆԱԿՈՉ ՀԱՅԿԱՏԱԿՆԵՐԸ

Մինչև հիմակ ան միամիտ հա-
 ւատքը ունենիք թէ հայերը
 թուրքիոյ մէջ միայն ստիպուած
 էին փառարանել Սուլթանը, երբ
 այս վերջինը իր եղբունազորութե-
 թիւններուն յարեւանը տօնելու
 անլուր յանդգնութիւնը ունեցաւ:
 Երբք հայ մը չէր կրնար երե-
 ւակայել որ օսմանն զժողա-
 յին ընթերցան սահմաններէն
 դուրս գտնուող ու է պղծակից
 մը որ Սուլթանին վարձկան մէկ
 պաշտօնեան չէ, որ սղքատ
 պանդուխտներու նպաստները կա-
 զուպտող ծանօթ դատաւան մը չէ,
 կարենայ Սուլթանին կենացը
 բաժակ պարպել որտի անխառն
 անգործութեամբ, զեղուն ինք-
 նարբութեամբ մը:

Այն անորինակ, անհաւատալի
 խնդրին սկզբնաւորութենէն ի
 վեր որ ծագեցաւ Սուլթան Հա-
 միտի ու հայ ազգին միջեւ եւ որ
 անյատակ անդունդ մը կը բանայ
 անոնց մէջտեղ, լեցուած միայն
 երեք հարիւր հազար զոհե-
 րու յոշտուած միտքի ու խոր-
 տակուած ուկորներովը, աղ-
 զայնութեան զգացումին յետին
 նշոյն իսկ կրող հայ մը մեր ա-
 մենէն իրերի միջնամիտ կեան-
 քին բարօրութեանը եւ երկարու-
 թեանը համար չի պիտի ուզեր
 կաթիլ մը գինի խմել:

Բայց Մանչեսթրի հայ վաճա-
 րականները խմած են:

Բաժակ պարպած են արիւն-
 շաղխ Սուլթանին կենացը, ան-
 թիւ անհամար հայերու կոտո-
 րածին քսանն հինգամեայ տարե-
 դարձը տօնելուն համար:

Անլուր, սպառնցող քան է
 ստիկայ: Պոլսոյ հայ մամուլը գո-
 վեստի, մողթանքի եւ ստութիւն-
 ներու ցնորական յիշաչերտ մը
 արտագրեց յոբելեանին առթիւ:
 Բայց այդ այլանգակ հրաշա-
 կերան արտագրող գրիչը մեքե-
 նայ մըն էր լոկ, զոր սարսափն ու
 ճնշումը կը շարժէին: Պոլսոյ
 պաշտօնական մարմինները կեղ-

ծաւորութեան և շոգորորդու-
 թեան մեծ կատակերգութիւնը
 իտալացին Սուլթանին շնորհնե-
 րուն արժանանալու համար: Ա-
 տոնցը այնքան մեր աչքին չի
 դարձեր, և բնաւ անակնկալ չէ
 մեզի համար, քանի որ այդչէն
 յանձն առած են այդ բարարու
 ըէժմը հանգիստ սիրտով տանե-
 լու:

Այսօր արտասահմանի մէջ մո-
 տաւորապէս եօթանասուն հազար
 հայ կայ ամէն կողմը ցրուած: Յո-
 բելեանին առթիւ, սպաս շունչ
 առնող բոլոր այս հայերը մէկ
 թափով անէժքի գոյքը միմիայն
 քեցին անպիտան գաղանի զէմ,
 մամուլի համայնական ձայնակ-
 ցութեամբ:

Մանչեսթրի հայ վաճառա-
 կանները՝ զգացումներու այս
 միահարկին արտայայտութեան
 մէջ լայն, քսանեղանցիկ արատ
 մը կը բերեն: Անոնք նիւթական
 շատ կասկածելի շահերու սպա-
 հովման համար կը զիջանին
 դառնալ ամենէն հրու, ամենէն
 ստրկացող հացկատակները թա-
 գակիր եղբունազորութիւն: Օտարու-
 թեան մէջ, ուր այնքան ուշա-
 գրութեամբ կը դիտուի հայուն
 նկարագրին զանազան կողմերը,
 մեքե զմեզ անյողգող, յարատե-
 ող եւ ամէն բանէ աւելի ստրկու-
 թեան պատու ոգիէն զերձ ան-
 հատներ զոյց տալու փափակ
 դրութեան մէջ կը գտնուինք:
 Հարիւրաւոր փարսախ հեռուէն
 Սուլթանին ափնոտ ոտքերը
 յոբելու զիջանող այդ հարուստ
 հայերը, որոնք անշուշտ կարե-
 ւոր դիրք մը բռնած են Անգլիոյ
 ամենէն մեծ կեդրոններէն մէ-
 կուն մէջ, իրենց նշաւա՛նի
 այդ քայլովը կարեւոր հարուստ
 մը կուտան հայուն բարոյական
 «բէքի թիւն», զոր բարձրացնե-
 լու, վերականգնելու գերմարդ-
 կային ջանքեր կը կատարուին
 ազնիւ ու անձանձիր հայերու
 կողմէ:

Մանչեսթրի հայ վաճառա-
 կանները նիւթական անարգ շա-
 հու համար ոտքերնուն տակ ան-
 իրիցօրէն կոխկոտեցին Մալու-
 թեան բարոյական նկարագրը:

Իրենց ընթացքին համար ոչ մէկ
 արգարացում կույ, Գաղաքակա-
 նօ, էն շարժած ըլլալու միակ
 պատրուակը զոր կրնան մէջ բե-
 րել, այնքան աննշան, այնքան
 անճարակ եւ այնքան միջուկ ար-
 դարացում մըն է որ վայրկեան
 մը իսկ անսր վրայ կանգ առնելը
 ապուշութիւն է:

Հիմակ կը հարցուի այդ շար-
 չի—վաճառականներուն ինչ որ
 շահեցան իրենց ստրկական այդ
 քայլէն: Սուլթանը, որ հայերուն
 շնջումը ծրագրած է, պաղ պաղ
 կը խնդայ այդ կարգի սողունա-
 կան քանդակներու վրայ, օտա-
 րը զգուանքով քիթը բերանը կը
 ծռուկէ, իսկ հայութիւնը իր
 ամենէն խորունկ արհամարհանքը
 կը շարժէ անոնց երեսին:

Իրենց շահելիք սկիւնները կը
 փոխարինեն՝ բոլոր ասոնք:
 ՇԱՂԷՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Երբ մարդ կը փափաքի ազգի
 մը կամ համայնքի մը մտաւորա-
 կան մակարդակին վրայ գաղա-
 փար կազմել, թող այցելէ անոր
 վարժարանները: Հոն անմիջա-
 պէս իր աչքին առջեւ պիտի
 պատկերանայ անոր օսման և զի-
 առութեանց մէջ ունեցած զարգա-
 ցումի աստիճանը: Վասնզի զըպ-
 րոցը ազգի մը կամ համայնքի մը
 մտաւորական յառաջագիւտութեան
 ջերմաչափը կը կազմէ պարզա-
 պէս իր աչքին առջեւ պիտի
 մը ընթերցասիրութեան նկատ-
 մամբ ունեցած ճաշակը ցոյա-
 ցըող հայերին:

Այս երկու հաստատութիւնները
 զոյգ մը լուսափողփող փարսնե-
 րն, որոնցմէ ցոլացող շողջողուն
 լոյսը համայն մարդկութիւնը կա-
 ռաջնորդէ դէպի յառաջգիւտու-
 թեան իսկական ուղին:

Ուսանող մանկտին, ապագայ
 մարդկութիւնը, դպրո ին մէջ
 առաջին անգամ գոտտիարակու-
 թեան և կրթութեան նախատա-
 րերը կը ստանայ, յետոյ՝ ընթեր-

ցանութեան շնորհիւ կսկսի պար-
 գացնել հետզհետէ իր մտաւորա-
 կան և հոգեկան կարողութիւն-
 ները:

Ընթերցանութիւնը՝ մտքին յե-
 սանն է, առանց անոր ուղեղը կը
 բթանայ, կը շորնայ ու կը քա-
 րանայ: Ընթերցանութիւնը մտքի
 կանթեղին լուսատու իւզն է:

Ամէն զարգացած կամ յառա-
 ջագիւտու հակամէտ ազգ կը
 գուրգուրայ շերմապէս քոյր
 նուիրական հաստատութեանց
 վրայ, որոնց գերը՝ շատ մեծ է
 մարդկային քաղաքակրթութեան
 մէջ:

Երկարատեւ պտոյտէ մը վերս-
 դարձիս՝ ուրախութեամբ իմա-
 ցայ որ քաղաքիս սղգային երկ-
 սեռ վարժարաններուն Պատ. Հո-
 գարծաւթիւնը և Թաղ. Խոր-
 հուրգը՝ միակամ, միախորհուրդ
 կը ջանան իրենց խնամոց յանձ-
 նուած վարժայանները յառաջա-
 գիւտութեան շաղկին մէջ դնելու:
 Լաւ, գովելի ու ծափելի աշխա-
 տութիւն: Փափաքեցայ երթալ
 տեսնել նաեւ Ընթերցարանը,
 մեծ տրամութեամբ իմացայ որ
 այս ամենակարեւոր հաստատու-
 թիւնը, ցնոր անօրինութիւն,
 փակուած է և գրքերն ալ աղ-
 գային վարժարանը փոխադրուած
 են: Այս անժամանակ և անտեղի
 փակուած մեծ ճաւաղից ինձի
 և ի յուսամ որ նոյն յար պիտի
 ազգէ և շաղկած իսկ է նաեւ ա-
 մէն բանիմաց և զգայուն հայու:

Ֆիլիպէ, Լուսնու, Դուրա, Սի-
 Սիլիստրէ հայերն ունին իրենց
 յասուկ ընթերցարանները, ո-
 րոնք օժտուած են ըստ բաւակա-
 նին ճոխ մատենագարանով և
 գրքից ազգային բոլոր օրական
 թերթերով և պարբերական հան-
 դէսներով:

Վառնան, որ հայերու բազմա-
 մարդութեան կողմանէ առաջին
 տեղը կը գրաւէ, ինչո՞ւ այս ա-
 մենակարեւոր և է՛ն օգտակար
 ձեռնարկին մէջ յիսամանց գիրք
 ունենայ:

Մեծամեծ զոհողութիւններու
 և ծանրածանր աշխատութեանց
 պէտք չիկայ ընթերցարանը յա-
 շույ և բարգաւաճ վիճակի մը

մէջ զնեղու համար. միայն և միայն քիչ մը բարեացակամութիւն:

Հետեւաբար կառավարկեմ փակ ընթերցարանին վարիչ մարմնին մեծարոյ անդամներուն՝ որ հաճին նիստ մը կազմել օրակարգ ունեւնալով ընթերցարանի վերաբացումը, և հրապարակային հրաւեր կարգալ քաղաքիս հայ հասարակութեան ներկայ գտնուիլ այս նստին պարտ ու պատշաճը անօրինելու համար:

Քաղցր է ինծի յուսալ որ ամէն անհատ, մասնաւորապէս երիտասարդութիւնը, սիրով պիտի ընդունի այդ հրաւերը և ամէն ջանք ու ճիգ չի պիտի խնայէ վերաբանալու համար ընթերցարանը ի պատիւ Վառնայի հայ հասարակութեան:

ԿԱՐՕ

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. ևսի. քիւիկ և վերջ)

ժողովրդին այդ իբր թէ ներկայացուցիչները կը քննեն, առանց վարանումի, իրենց հակացողութեան բոլորովին օտար այս բոլոր խնդիրները, և կը վճռեն միշտ մեծամասնութեան անունով. այնպէս որ վերջիվերջոյ ժողովրդին ամենաշնչին փոքրամասնութեան կարծիքն է որ յաղթանակը կը տանի: Ենթադրենք թէ երեսփոխանական ժողով մը ընտրուած ըլլայ երկրի մը ընտրողներուն երկու երրորդին մեծամասնութեամբ (և գիտենք թէ որ աստիճան արհեստականօրէն): Այս ժողովն ալ օրէնք մը կընդունի կամ կը մերժէ իր անդամներուն երկու երրորդին հաւանութեամբ: Ասկէ կը հետեւի թէ օրէնքը, նոյնիսկ տեսականօրէն, կարտայայտէ ընտրողական մարմինի երկու երրորդին երկու երրորդին կամքը. ինչ որ հաւասար է չորս իններորդի այսինքն կէսէն ալ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (6)

ԽԱԽԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Բ. (նար.)

Կարելի չէր որ Գեղամեան արդգէսի պէս ուզէին օգտակար գտնալու ձգտումներով ու վեհ գաղափարներով լեցուն երիտասարդ մը. երկար ատեն հեռու մնար նաև յեղափոխական գործունէութենէ, մասնաւորապէս 1894 և 95 տարիները, երբ Պոլսոյ հայութեան մէջ տիրապետող ոգին յեղափոխական էր:

Վարդգէս Կեղարնականի մէջ իսկ սկսած էր յեղափոխութեան վրայ մտածել. բայց իր չափազանց զգայուն ու բարի խառնուածքը կարգիւնը զինքը խիզախ ու արիւնտ ձեռնարկներու մէջ նետուելէ:

Սրտանց կը փափաքէր, և ի հարկին իր անձը կը գոհէր, որ հայութիւնը թոթուէր իր սարկական կապանքները. բայց ատոր համար յե-

նուագին (նոյնիսկ նկատի չառնելով քուէարկութեան չի մասնակցողներուն պատկանելի թիւը):

Այս կերպով սովորական սկզբունքը նոյնիսկ տեսականօրէն ինքզինքին հակառակ արդիւնքի մը կը յանգի: Թէ ինչ կը պատահի գործնականին մէջ, ատիկայ արդէն յայտնի է. երեսփոխանական դրոյթեան անբարոյականացուցիչ և անպակաս իչ արդիւնքները որո՞ւ յայտնի չեն: Ամէն մարդ զգուշացնէ այն թեկնածուներէն որոնք ամբողջ կը շուղօրթին, որոնք անկարելի կը խոստանան, որոնք վաղը կը մտնեն ինչ որ երկի խոստացած էին, որոնք նոյնիսկ նիւթական կաշառատութեան կը դիմեն յաջողելու, բնորոշելու համար:

Անիշխանութեան հակառակորդները կառարկեն թէ մարդիկ չեն կրնար օտանց կտաւաբար թեան ապրիլ. որովհետեւ հրեշտակներ չեն, և ձօտ ատենէ մըն ալ հրէշտակ չի պիտի դառնան: Բունիսկ այն պատճառով որ մարդիկ հրեշտակներ չեն, վառնաբար է վատնել թացարձակ իշխանութիւնը քանի մը գայլերու, որպէս զի անոնք կտաւաբան քիչ թէ շատ անզիտակից հօտ մը: Ասկէ զատ, իրականութիւնը մեզից ցոյց կուտայ թէ, նոյնիսկ ամենամաքուր և ամենէն անհաճախողը անհատները իշխանութեան զեկը իրենց ձեռքը առնելով, կարտայայտան ու կապականին: «Եթէ ընտրեալները հրեշտակներ իսկ ըլլային, իշխանութեան հասանուն պէս, չուտով դիւշային եղջիւրներ ու ճանկեր պիտի բուսնէին անոնց վրայ»: Բայց է հեզօրէն արդի անիշխանական շարժման նախակարգադատը. Պաքոնէն:

Անցեալ ու ներկայ միասնական կամ հասարակագիտական քաղաքական խաղաղութեան անիշխանականները կը հակադրեն և նշմարել կուտան քաղաքական այնպիսի կարգեր, ուրկէ ամէն իշխանութիւնը որ պիտի վտարուի: Անոնք ցոյց կուտան այն բազմաթիւ սոսկական ընկերութիւնները և ընկերակցական համարմբռումները, որոնք կը վիտան արդի ընկերութեան մէջ. լարաքանչիւրը իրեն յատուկ ուրախ նպատակ մը ձգտելով. փոխադարձ օգնութեան

զավարժութեան արիւնտ փորձերէն աւելի կը նախընտրէր որ հայր և թուրքը հնազանդ գաղափարակուելով, զարգանալով և քաղաքակրթութեան կարող ըլլային իրենց բուն օգուտը հասկնալու, զիրար գոհացընէին և ստեղծէին այնպիսի պայմաններ, որ կարելի ըլլար երկուքն ալ քով քովի ապրել եղբայրաբար և խաղաղիկ. ու զո՞ չի դառնային Եւրոպական գիւղարհիտութեան մասնաձայնաբար խաղաղութիւն:

Վարդգէսի այդ խաղաղ բաղձանքը սակայն երազ մըն էր լոկ և անիրականաւորի, քանի որ թուրք մոլեռանգութիւնը օրէ օր բազմապատկելով իր անիրաւ ու բարբարոս հալածանքները հայութեան դէմ, կը մղէր զանի յուսահատական փորձերու:

Վարդգէսի զգրողական ընկերներէն մէկը Հնչակեան կարեւոր գործիչ մըն էր. Վարդգէս զգրողին մէջ անկէց չարուանդ թերթ կը ստանար, և քիչ քիչ թթութեամբ իր վարանտ վրձակը, որոշեց յեղափոխութեան նուիրել իր ոյժերը:

Դէպք մը սակայն ժամանակի մը համար յետաձգեց իր այդ մտադրութեան գործադրութիւնը:

ընկերութիւններ, որբանամ, կըրթական և ընթերցասիրաց ընկերութիւններ, մարմնամարդական, գործ սկզական ընկերութիւններ և այլն և այլն, որոնք սղատարին կը գործեն: Նոյնիսկ մեծագոյն ձեռնարկները, ինչպէս երկաթուղիներու ընկերութիւնները, աղատօրէն իրարու հետ կը համաձայնին, որպէս զի ապահովին տնտեսն հետաւոր երկիրներու միջև կանոնաւոր յարաբերութեանց հաստատումը:

Արդ՝ անիշխանականները կընդունին թէ աղատօրէն իրարու միացած մասնաւոր ընկերութիւններու բազմութիւնը մը, որ իր սրամարդութեան աւել կուտենայ արդիւնաբերութեան բոլոր միջոցները, կատարելագոյն ի վրձակի պիտի ըլլայ հանրային բոլոր պէտքերը լրացնելու և անտեսական բոլոր պահանջները գոհացնելու, աւելի լաւ կերպով քան ներկայ պիտութիւնները և քարթիթայիտ գաղափարը: Այն ատեն կատարելագործութիւններն ու յատաճումներն ընկերութիւնները ներկայէն շատ աւելի բանաւոր ու արագ գործածութիւն մը պիտի ընդունին:

Վաղով ընկերական կարգու սարքին իբր թէ պահպանութեան համար արդի կատաւարութեանց անուանական դերերուն, անոնք բացարձակապէս աւելորդ պիտի դառնան, որովհետեւ պետութեան և սոսկական քարթիթային ջնջումով անտեսական հաստատութիւնը պիտի հաստատուի ապագայ ընկերութեան մէջ: Քանի որ ընկերութեան յղիացած հարուստի և ամէն բանէ զրկուած չքաւոր գաղափարի արդի երկու բաժանումը երբ այլուս գոյութիւն չի պիտի ունենան, քանի որ այլ կեան չի պիտի երևի իրենց ծնողքին չքաւորութեան պատճառաւ ապրտութեան և քարթիթայական ապականութեանց մէջ ընդարձացած սղաներ, միեւնոյն ատեն պիտի անհետան ոճրագործութեան զլիսաւոր պատճառները, և անոնց հետ, ստիկանութեան գաղափարները և անհաճախութիւնը:

Ահաւասիկ անիշխանութեան գաղափարները, ամենահակիրճ կերպով

Վարդգէսի Հնչակեան գաղափարները մասնաւորապէս ստիպուեցաւ Եւրոպա ապաստանիլ, արդգէս և իր միւս գաղափարները ոտականութեան կողմէ խաղաղութեան, հարցաքննութեան, բայց կասկածելի բան մը չի գտնուելով իրենց մօտ աղաղ ձգուեցան Մակայն այս գէպքէն ետքը թէ վարժարանին կանոնակարգութեան և թէ Ոստիկանութեան կողմէ խիստ հակողութեան ենթարկուելով ստիպուեցաւ զգոյ մնալ:

Վարդգէս զգրողի շրջանը աւարտելէ յետոյ, 189 ի վերջերը հանդիպեցաւ Հայ Յեղ. Դաշնակցութեան Պոլսոյ ներկայացուցչին:

Մեկիւր Դաշնակցութեան այդ անձնուրաց ու անխոնջ աշխատաւորը, միանգամայն ոյժեր փնտռելու ու գնահատելու իր եղական կարողութեամբը տեսաւ որ Վարդգէսի մէջ պարտաւ հող կար. սկսաւ գանել անոր մէջ իր փրկարար գաղափարի սերմերը:

Վարդգէս կը սիրէր Մեկիւրը, կը համակրէր անոր, բայց անոր պատկանած յեղափոխական կուսակցութիւնը իրեն համար բոլորովին նորութիւն մըն էր:

ուրուագծուած, Ձեմ ու զեր Շարժումի սիւնակները խճողել այն տեսակ վարդապետութեան մը սկզբունքներով՝ որոնց տարածման գործին երբեք չէ նուիրուած ձեր թերթը: Ձեր ընթերցողներէն անոնք որոնք կուտեն աւելի լայն գաղափար մը կազմել անիշխանականութեան մասին, թող հետազոտեն 1894ի «Համայնք»ի էջերը, թող թերթին հետեւալ հայերէն թարգմանութիւնները:

Գեղացիներու մէջ, հեղինակ Մալաթիա

Իմ Գեղացի եղբորս, է. Ռեքիւ

Քաղաքական Իլաուսները, Կրօպուկին

Պետութիւններու Վայքայումը, Կրօպուկին

Անիշխանականութիւնը, Կրօպուկին

Յեղափոխական փոքրամասնութիւնը, Կրօպուկին

Ինչո՞ւ մենք յեղափոխական ենք, Ժ. Կրպիկ և այլն:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՌԱՆ ՄԻ

Կը ցուիմ որ «Նարժում»ի ընթերցողներուն գլխուն այս անգամ նոր խնդիր մը կը փաթթեմ. սակայն այժմէն կը խոստանամ որ այլևս ուրիշ անգամ չի պիտի զբաղիմ «Մալահ» ծածկանուան տակ թագնուած արարածով. ըսի՝ ըսաւներէն չեմ ախորժիր, գրելու համար հարկ եղած տարրական պարկեշտութիւնը ունեցող անձերու հետ վիճարանիլը ինձ պատիւ չեմ համարիր: Յեղափոխական Ս. գործը նկատի ունենալով գրել ստիպուեցայ «Շարժում»ի 229 և 230 թիւերուն մէջ, և ճիշդ այս պատճառներով էր որ անաչին «բաց նամակ» ուղղած էի «Հընչակ»ին, և իմ պարտքս կատարեցի, մնացածը «Հնչակեան կուսակցութեան» գործն է, եթէ

ինք Հնչակի անունը միայն լսած, Հնչակեան գործունէութիւն միայն տեսած էր, ուստի Դաշնակցութեան վրայ գաղափար մը կազմելու համար գրեց արտասահման փոխած իր բարեկամ գաղափարներն, ոյուր անկողնութեան վրայ բողբողին վստահ էր:

«Հեռու», հեռու փոխիր սա խախաղողներէն, կը գրէր իր բարեկամը Ռուսոնքէն, սա Դաշնակցութեան կանոնը հասարակ խաղաղութիւնն, որոնք հոտ ժողովուրդը կը կողոպտեն և անոնց դրամովը հոտ աղաղ երկիրներու մէջ հանդիտու կապրին: Երբեք տեսած ևս որ ստանք յեղափոխական գործ մը, ցոյց մը կատարած ըլլան և ինչպէ՞ս ընեն, թէ երկրին և թէ արտասահմանի մէջ ամբողջ հայ ժողովուրդը մեզի հետ է, եթէ իսկապէս օգտակար ըլլալ կուզես յեղափոխութեան և հետեւաբար ազգին, մտի՛ր Հնչակեան անպարտելի քաջութեան բանակը, որուն վերապահուած է միայն փչել թուրք բարբարոսութեան լուծը և վերականգնել Հայկական թագաւորութիւնը:

Վարդգէս կապալով այս նամակը

ուզէ կարող է ստուգել տալ
զբաժնեքս, կամ ուղղակի ինձ գի-
մելով և կամ երկու փոխանորդ
կարգելով այստեղ :

Բայց այս անգամ հարկը պա-
հանջեց որ ուղղակի պատասխա-
նեմ Սլաճիին . չէ թէ իրեն պա-
տիւ մը բարձր ըլլալու համար, ինչ-
պէս ինքը այդ «մեծ պատեր» (°)
բարձ էր ինձ (տես «Հնչակ» 1900
թիւ 5) , այլ վերջնականապէս ա-
նոր ստախօսի և հայհոյիչի գերը
հայ հասարակութեան ցոյց տա-
լու համար և պնդելու համար
նախորդ «բաց նամակիս» ճշմար-
տութիւնը :

Եւ ոչ իսկ բառ մը կը պատաս-
խանեմ այն անձնական հայհո-
յանքներու համար զորս «Սլաճ»
ինձի դէմ ուղղած էր . առոնց
արժէքը գնահատելը զիս ճանչ-
ցողներուն կը թողում . իսկ ա-
նոնք որ զիս չեն ճանչցած , եթէ
ոչխարամիտ չեն , «փաստեր» ու
«ապացոյցներ» կը փնտռեն . ա-
մէն անպակաս մայր կարող է ա-
մենէն ազնիւ մարդը առանց
փաստի և ապացոյցի անուանար-
կել , զանազան անականներ նուր
բերով անոր . . .

Արեւմտեան Սլաճիներու և թափա-
ռիկներու էութիւնը , իսկական
արժանիքը , գործը և եանքը
հասարակութիւնը կարող է դա-
տել ու գնահատել , այս կէտը
հասարակաց դատաստանին կը
թողում : Ինքզինքս արգարացնե-
լու պէտք չունիմ . «Սլաճիին կը
մնայ հաստատել «լմ արհեստով ,
իմ էութեամբ մի կատարեալ շար-
լաթան լինելը» . . . :

Դարձեալ չեմ կարող իմ ցաւը
չը յայտնել «Հնչակիին» . որ իր
էջերուն մէջ միութեան և համե-
րաշխութեան կոչ ընելով հան-
դերձ , նոյն թիւին մէջ կը հիւ-
րընկալէ «Սլաճի հայհոյիչի
յոգուածը , որուն մէջ անվայել

անականներ կը վիս ան ոչ ու
ձախ :

Յաւալի և վնասակար հակասու-
թիւն . . . :

Գաղափարի և մտածումը պա-
տուիւն տեսակէտով կը յար-
գեմ՝ բոլոր կուսակցութիւնները ,
իմ անհարկութիւններս և քննա-
դատութիւններս կը պատկանին
միմիայն «կասկածելի» և «կեղ-
տաս» անհասանելու : Ահա՛ , այս
խորին յարգանքով վերջնական
գիմում մը եւս կընեմ «Հնչակի
խմբագրութեան և ամբողջ կու-
սակցութեան» . որ այս յուզում
խնդրին մէջ լրջութեամբ և ա-
նաշատութեամբ կատարեն իրենց
պարտականութիւնը :

Այժմ սկսինք երկու խոս-
քով հերքել «Սլաճիին անխիղճ
խեղաթիւրումները և ստախօսու-
թիւնները» : Հաստատուած իրու-
զութիւն մըն է թէ հրապարակա-
յին վրձարանութեանց ժամանակ
ակարբ , անխորտր , վատը կամ
չարը ինքզինքը արգարացնելու
և կամ չբնական համար կը գիմէ
յաւիտենական սուտին և դէպքե-
րու խեղաթիւրման . . . : Տկար ու
ժանգոտ զէնք . . . :

Գրութիւնս չերկարելու համար
«Սլաճի խոսքերը մէջ չի պիտի
բերեմ» , ընթերցողը «Հնչակի
այդ թիւը թո՛ղ կարդայ ու բազ-
դատէ զայն» , նախորդ «բաց նա-
մակիս» և այս յոգուածիս հետ :

1.— «Հնչակի գերը , կոչու-
մը և պարտականութիւնը կը պա-
հանջէր որ անոր էջերը տիրա-
ցուական և առաջնորդի ու տէր-
տէրի խնդիրներով չզբ-
ղեցնենք «Սլաճ» :

2.— «Սլաճի երկտայարգա-
նալը մեծ զարմանք չի պատճառեց
ինձ . իմ գիտցած 40նոց Սլաճը
25 տարեկան է եղեր (°) . Աստ-
ուած ջարի վայելում տայ բազո-
սական օրհնաջողով . . . : Սակայն

ես կը պնդեմ , որ իմ անհարկած
իսկական «Սլաճիին» :

3.— «Անձնական ատելութիւն ,
կիրք» չեմ ունեցած և ոչ մէկի
դէմ , առկայ հրապարակաւ և
բացարձակապէս կը յայտարարեմ
և եթէ կայ մէկը որ կարող է ա-
սոր հակառակը ապացուցանել ,
ես պատրաստ եմ անոր ձեռքով
ներկայացած թոյնը խմել : Ընդ-
հակառակը , տարաբաղաբար իմ
հասարակական քննադատութիւն-
ներս յաճախ ուղղուած են բարե-
կամ կարծածներու դէմ , առանց
նախապէս «անձնական» ատելու-
թիւն մը կամ հակառակութիւն
մը ունենալու , ես ինձ միշտ ա-
ռաջնորդ ունեցած եմ ճշմար-
տութիւնը և հանրային շահը ,
նոյնիսկ ստնակոխ ընելով անձ-
նական շահս , բարեկամիս կամ
ճարձմիս շահը :

ԹԱՓԱՌԻԿ
(Մեղացածը յարոյրով)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վանի այցելու հովիւ Տ. Ներ-
սէս եպիսկոպոս Ասլանեան , ան-
ցած հինգ շաբթի օր Պոլիս հասեր
է և հիւանդ ըլլալով ուղղակի
Պոյաճը-Գիւլ իր բնակարանը գա-
ցել է : Սրբազանը վերջապէս
հասաւ մուրատին : Չեմք գիտեր
թէ ի՞նչ կ'այ Վոսփորի արհերուն
վրայ , ուրկէջ չեն ուզեր երբէք
բաժնուիլ մեր փափկակեաց և
մեծփոր եկեղեցականները :

Ս. էջմիածնէն Պատրիար-
քարանի կը գրեն թէ՛՝ մէկ ամիս
առաջ տեղացող սարսափելի կար-
կուտէ մը հինգ հայաբնակ գիւ-
ղեր բուրսովին վնասուեր են և
բնակիչները զրկուեր են նոյնիսկ
օրուան պաշարէն :

— Անցած շրեքշաբթի օր մե-

ներ է երջանկայիշատակ ներսէս
պատրիարքի մեծ մայրը , հա-
րիւրամեայ հասակին մէջ :

— Պարսից Շահը Դաւրէժէն
անցած ժամանակ , Տ. Այվատեան
եպիսկոպոսին խնդրանքին վրայ ,
հրաման ըրեր է որ կառավարու-
թեան կողմէ Դաւրէժի Արամեան
վարժարանին յատկացած և եր-
կու տարիէ ի վեր չի վճարուած
նուէրը ամբողջովին վճարուի :

— Ռումանիոյ դեսպանատան
գործակատարը Պատրիարքարա-
նի կը հարգողէ թէ՛՝ Պօթուշանի
մէջ գտնուող երբեմն քահանայ
Աթանաս անուն անձը այս անգամ
վերջնականապէս հեռացած է
Ռումանիայէն : Աթանասի Ռու-
մանիայէն մեկնումը աղմկալի
եղեր է , բայց վերջապէս տեղա-
կան կառավարութիւնը գործադ-
րեր է իր կարգադրութիւնը և
Ռումանիոյ հայերն ալ ազատե-
ր են այս մարդուն ձեռքէն : Յիշ-
եալը այս անգամ եկեղեցական
տարազով եղիպոսու անձեր է և
այնտեղ կարգ մը միաբնակ գրա-
նելով հաւատացուցեր է թէ՛՝
ինքն անմեղ մէկն է : Կը զգու-
շացնենք մեր բոլոր ազգային-
ները որ չի խաբուին այս գառ-
նազգեստ գայլ-մարդուկին կեղծ
ու պատիր խօսքերէն , վասն զի
այս այն մարդն է որ անկարգու-
թիւն չէ մնացած որ չի գործէ
Պոլիս , Ռումանիա և այլուր :

— Կիմանանք որ «Մասիս» շա-
բաթաթերթին խմբագիրը , Տիգ-
րան Արփիարեան , ձերբակալուեր
և թերթին հրատարակութիւնն
ալ խափանուեր է :

— Ամերիկայէն կը գրեն թէ
«Հայրենիք» թերթը Պօթուշանի
խաղաղուած է , ուր պիտի հրա-
տարակուի այսուհետեւ :

— (—)

սահմակած մնաց . ինչպէս ըսինք կը
սիրէր Մելիքը , կը համարէր անոր ,
բայց իր ընկերով յեղձ փոխական գոր-
ծունէութիւնը և անձնուիրութիւնը
մտնէն տեսած ըլլալով չէր կարող
կասկածիլ նամակին պարունակու-
թեանը վրայ : Գիշ , քիչ դազեցուց
իր ստուգութիւնները Մելիքի հետ և
մտաւ նորէն Հնչակեան կուսակցու-
թեան մէջ :

Վարդգէս լաւ մտածող և լաւ ալ
խօսող ըլլալով շուտով համակիրնե-
րու խումբ մը ժողովեց իր բոլոր-
տիքը , և գործին աւելի օգտակար
զանալու համար մինչ կը պատրաս-
տուէր ուսուցչութեան պաշտօնով
գաւառ երթալ , յանկարծ իր պետե-
րէն—թէ զարգացումով և թէ՛՝ ար-
ժանիքով իրմէ շատ ստոր մարդ/կ-
ներ—հրաման ընդունելով մնալ մայրա-
քաղաքին մէջ և բոլոր ուժովը կու-
տել Դաշնակցական հոսանքին գէ՛մ
որ Պոլսոյ մէջ կը սկսէր պոյանալ
անախկալ և անյուսալի ուժով մը :

Վարդգէս թէ՛ և իր բարեկամին
նամակովը բաւական նախապաշար
ուած էր Դաշնակցութեան վրայ ,
բայց իր յեղափոխական գործունէու-
թեան մէջ հեռագնեալ անոնց հետ

չփոխելով , անոնց ուղղութեան թա-
փանցելով , աեսաւ որ անոնց մտաին
ընթացները վրայ՝ բաց ստուգութիւն
ներ են , և թէ Դաշնակցութեանը
իրենց աւելի խիստ կարգապահու-
թեամբ և օրինակելի վարմունքովը
կը գերազանցէին Հնչակեանները , ու-
րոնց մէջ ցաւօք կը տեսնէր որ կոյր
մըջումի մը մոլեղնութեան տակ
հեռագնեալ կը պակսէր բուն յեղափո-
խական ոգին , և մտնալով հասու-
րակաց թշնամին թուրք վարչու-
թիւնը , իրենց բոլոր ուժերը կը գի-
նէին Դաշնակցութեան գէ՛մ :

Վարդգէս բոլոր ուժովը աշխատե-
ցաւ այդ եղբայրասպան կուրի ա-
ռաջքն առնել և ձայր հիւսած տեղը
խօսեցաւ , գրեց Պոլսոյ կեդրոնական
վարչութեան , գրեց Կեդրոնին սա-
կայն իր նկատողութիւնները մտիկ
չըլլուելէ զատ օր մը խիստ յանդի-
մանազիր մըն ալ ընդունեց Կեդր-
վարչութիւնէն :

«Բեղի պէս նորընծայի մը համար ,
խրատ տայէ աւելի իր պետերուն
կուրբէն հնազանդիլ միայն կը մնայ» :
Ու երբ իրեններէն յուսահատեցաւ ,
գիմեց Դաշնակցականներուն , որոնց
պարագլուխները իր հին գպրոցական

ընկերներն ու բարեկամներն էին .
խօսեցաւ անոնց հետ , որպէս զի եթէ
կարելի է գոնէ իրենց կողմէն կարելի
եղածը ընեն . ջանք չի խնային երկու
կուսակցութեանց մէջ մերձեցում մը
յառաջ բերելու . և եթէ միւլթիւն
մը կար լի չըլլայ , գոնէ համեմաչի
գործակցութեամբ մը եղբայրասպան
կուրի մը առաջքն առնելու :

Մեր ալ փափաքը այդ է կը պա-
տասխալ էին անոնք . սակայն կարելի
չէ . քանի որ գոթ չէք կրնար վազ
անցիլ Բեկէ՛ մը որ հետուն կեցած
միապետի հովերով հրամաններ կար-
ձակէ և կուզէ որ անպայման ձեր
մէջ , իր մէջ ձուլուինք . իսկ մենք
չենք կրնար կուրբէն գործիք գառ-
նալ յեղափոխութեան անդիտակ և
իրենց շահերուն ու փառքին հոգե-
րովը ծանրարեալ ուսած անձերու : Չեր
վարիչները իրենց ինկած վարքը
փրկելու համար ամէն միջոց պիտի
չի խնային մեղի դէմ Մենք բնական
է կը ցա ինք , բայց գորազգարաւ
առաջք չենք կրնար առնել :

— Է՛ս ստոր վերջը՝
— Վե՛րջը , մի՛ վախնաք , ձերին-
ներուն ազոտա զէնքերը չի պիտի
գործածենք բնաւ . ամէն ճիգ պիտի

թափենք ընդհանուր գայթակղու-
թեան մը առաջքն առնելու համար ,
և մեր պատասխանը պիտի տանք
գործնական կերպով , և օր մը Դաշ-
նակցութիւնը յեղափոխութիւնը պի-
տի գնէ ժողովուրդին առջեւ իր բնա-
կան ու ուղիղ ճամբուն մէջ :

Այս խօսքերը ըսողը Բաբէկէն—Սիւ-
նի էր .
Վարդգէս տեսնելով որ իր բոլոր
ջանքերը պաւազը կերթան , և իր
ստոր գառններն ու վերագառններն յե-
ղափոխութիւնը մոռցած լով «աշ-
նակցականները հալածելու ետեւէ են
և ինք բան մը չի կրնար ընել , կա-
մացուի մը հրաժարեցաւ այդ գործու-
նէութիւնէն :

Դէպքերը իրարու յաջորդեցին ,
1897 ի և 98 ի ցոյցերը ամբողջ Պոլիսը
տակն ու վրայ ըրին : Վարդգէս 98 ի
Սեպտեմբեր 13ին ստիպուեցաւ փախ-
չիլ Պոլսէն և Պուլիարական Պօրիս
չոգենաւով եկաւ անա :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Հոյճի վէճը վերջացած կը նկատուի, վասն զի Գերմանիոյ դեսպանը պէտք եղած զոհարարութիւններէն և Կոնստանտնուպոլսէն Գոլի կանչուեր է:

— Տիգրանակերտի մէջ անցազիր շունենալնուն պատճառաւ ձերբակալուած երկու գերմանացիները ազատ արձակուեր են:

— Պարոնից Եհան, որ Պոլսու երթալու մտադրութենէն ետ կեցած էր, փոխեր է իր որոշումը հետեւաբար ամսոյս 29ին պիտի երթայ Սուլթանին այցելութիւն մը տալու, վասն զի իբր ընդունելութեան մասին առաջարկուած պայմանները ընդունուեր են Համբարումի կողմէն:

— Նասըր փաշա Պէլկրատ մեկնուեր է Եֆէսքաթի ականակուող շքանշանը նուէր տանելու համար իր վեհապետին կողմէն Սերպիոյ նորապսակ թագուհիին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Վաշինկթոնէն կը հեռագրուի, որուսական գործակատարը, ներկայանալով Միացեալ Նահանգներու քարտուղարին, յայտարարած է թէ՛ տէրութեանց կողմէն Բէքինը պարպելու մասին տրուած պատասխանը Ռուսիոյ կայսեր մտադրութիւնը փոխած չէ երբեք, և թէ՛ որուսական զինուորներուն յետոս կոչումը արդէն սկսած է:

Ռուսական գործակատարը Մ. Նահանգներու բանակի քննադատը վրայ տեղեկութիւններ ուղեր է քարտուղարէն, սակայն այս վերջինը յայտնած է որ պատասխանելէ առաջ՝ նախագահին խորհուրդ պիտի հարցնէ: Կը կարծուի որ Մաք-Գրինլի հեռագրած է իր քարտուղարին ծանուցանելու թէ՛ Մ. Նահանգացի կառավարութիւնը դեռ տարածամ կը նկատէ իր հետեւելիք քաղաքականութեան մասին յայտարարութիւն մը ընել:

— Ամս րիկացի հարիւր՝ ձիաւոր զինուորներու շուկա մը պիտի մեկնի հիւսիսային-արեւելք ողջառեւ ճամար այն բնիկ քրիստոնեաները, որոնք Պոքսէրներու ձեռքը կը գրուուին:

— Վաշինկթոնէն կը հեռագրուի թէ՛ գերմանական զեւսպանը կարծիք յայտնեց է որ Գերմանիա փափաքող է միաբան գործակցութեան և մտադրութիւն շունի անկախութեն գործելու:

— Պատմոյ գործը լմննալէն ետք՝ լսնդիրը կուգայ վրասի հատուցման: Վիէննական թերթ մը կը տէ թէ՛ դաշնակից տէրութիւնները 60 կամ 80 միլիոն անգլիական ոսկի պիտի պահանջեն Չինական կայսրութենէն:

— Գերմանական կառավարութիւնը գլխաւորապէս բանակցութեանց առջին պայմանը կը նկատէ Չինաստանէն պահանջել որ իրենց յանձնուին ոճրագործութեանց նախադրականները, և այս մտքով միւս տէրութեանց ծանուցագիր մը զրկած է:

— Շունկայէն կիմացնեն թէ Բէքինէն 25 քիլոմէթր հեռաւորութեան վրայ, Լիանկ-Չիանկի մօտ, 6,000 Պոքսէրներու և գերմանական բանակին միջեւ ընդհարում մը տեղի ունեցեր է: Պոքսէրներու միացած կը գրուուին և զէր չինական կանոնաւոր զօրքեր: Պոքսէրները ցրուեցան 380 հոգի կորսնցնելով, գերմանացիք միայն մէկ մեռեալ և հինգ վիրաւոր թուրքիներ: Քաղաքը ամբողջովին կրակի տրուեցաւ:

— Գերմանական թերթ մը կը տէ թէ՛ Լիհոնկ-Չանկ ըստ յայտարարութեան, բայց երրորդական վրէժխնդրութենէն զերծ մնալու համար լուսթիւն պիտի պահէ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պոքսէրները, Լորտ Բոպէրթի կցման յայտարարութենէն վերջնիսկ, վհատութիւն ցոյց չեն տար բնաւ, և մասնակի կռիւները կը շարունակեն: Կործանած են մէկ քանի կարեւոր կամուրջներ, այրած են 300 վակոն, փրէնձ զօրավորին յառաջխաղացումը արգիլուած է երկու պոէր ենթակայանի, որոնք կը գործեն Պոթա զօրավորին հրամանատարութեան տակ:

— «Տէլլի Թէլէկրաֆիկ» Լորէնցո-Մարքէլի թղթակցը կը հարցէ իր օրաթերթին Պիրկէր փոխ-նախագահին յայտարարութիւնը, որուն համաձայն Քրիկէր թողած է իրանսփալ: Յայտարարութեան մէջ ըսուած է թէ՛ նորին մեծութիւնը իր ձերբութեան պատճառաւ, չի կրնալ վհեանել ռազմական շարժումներուն, գործադիր իշխանութիւնը որոշած է նորին մեծութեան վեցամսեայ արձակուրդ տալ, որպէս զի եւրոպա ճամբորդէ և հոն պաշտպանէ իրենց գաւոր:

Այս որոշման յարտարարութիւնը կոչնչացնէ հետեւաբար Լորտ Բոպէրթի և անգլիական մամուլի ամբաստանութիւններն ու մեկնութիւնները:

— Հոլանտական զրահաւոր մը եւրոպա պիտի փոխադրէ Քրիկէրը: Այս առթիւ Անգլիական մամուլը սկսած է կծու լեզու մը գործածել Հոլանտայի նկատմամբ:

— Ռուսական թերթերը կուզեն հաւատալ թէ՛ Քրիկէր նախագահին գործը յաջողութեամբ պիտի պսակուի:

Քրիկէրի ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

«Տէլլի Թէլէկրաֆիկ» թղթակցը հետեւեալը կը հեռագրէ Լորէնցո-Մարքէլէն:

Գացի կառավարական պալատը Քրիկէրը տեսնելու, և Լորտ Բոպէրթի կցումի յայտարարութեան մասին անոր կարծիքն առնելու:

Կարողացայ ակնարկ մը նետել այն սենեակին մէջ, ուր կը գտնուի երբեմնի նախագահը: Երբունին ընկողմանած է երկար աթոռի մը վրայ ոտքը սաքին դրած մօրուքը համակ սպիտակ էր և երկարած:

Ոստիկանութեան պաշտօնեան փոխանորդ կարգուած էր Քրիկէրի կողմէն հարցումներու պատասխան տալու:

Քրիկէրի առողջութեան մասին հարցումս ի պատասխան ըսաւ որ նախագահին առողջութիւնը լաւ է, բայց քիչ մը կը նեղուի աչքի ցաւէ:

— Պարոն Քրիկէր կարողացարդե՞ք Բոպէրթի յայտարարութիւնը:

— Այո, — Ստոյգ է որ մոտեցս եւրոպա պիտի մեկնի:

— Այո կամ ոչ, նախագահը իրանսփալը թողուց անորոշ ժամանակի մը համար, եթէ եւրոպա երթայ, վից ամիսէն պիտի վերադառնայ, բայց գեռ վերջնական որոշում մը չէ տրուած:

— Պոքսէրները կը յուսան տան կուին իրենց գաւորն յաջողութեանը համար, և ինչո՞ք կը շարունակեն դեռ պատերազմը:

— Կը կուինք մեր հայրենիքին անկախութեանը համար, պիտի շարունակենք գալու մինչեւ որ արեան վերջին կաթիլ մը իսկ չի մնայ մեր երակներուն մէջ: Պատերազմը շարունակելը մեզի հոմար անօգուտ չէ: Պէտք է լաւագոյն արգիւնք մը ձեռք ձգել, եթէ հպատակութիւն յայտնենք, ապա պիտի, մեր տեղը պիտի ըլլայ Ս. Հեղինէ կամ Ուէլլան: Նախամեծար կը սեպենք կուռի և միշտ յուսալ:

Բոպէրթի յայտարարութիւնը ստույթեանց շարժապատում մըն է պարզապէս: Անիկ վերջնական նապէս մեզի հետ գործը չէ կարգադրած: Ժամանակը պիտի հաստատէ որ դեռ յաղթուած չենք: Անգլիա պիտի կրնայ թերեւ մեզ յաղթել սակայն ոչ երբեք ընկճիլ:

Յ. Կ. ԲԱՍՄԱՅԵԱՆ

Բանասեր

Այս եռամսեայ հանդէսին Բ. հատորի Ա. պրակը հրատարակուած է: Բանասերի տարեկան գինն է 20 ֆրանք, մէկ գիրքը 6 ֆրանք:

Հասցէ՝

Basmadjian

112 Bd. Rochechouart P. ris

—) (—

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Պատ. Հայկ Եարամեան, Ֆիլիպէ. — Ձեր նամակը աւելորդ կը համարենք հրատարակել, որովհետեւ փոխանակ հերքող փաստերու, լոկ աղօթքներու ու մաղթանքներ կը պարուհակէ ձեր գողունի որսորդութիւնները մերկացնող, մեր աշխատակիցներուն հասցէին ուղղուած: Աստուծոյ տեղը ժողովարանն է ոչ թէ Շարժումի, իւնակները:

Եթէ ձեր մասին գրուածներուն համար լուրջ դիտողութիւն մը ունիք, «Իրով պատրաստ ենք հրատարակելու»:

Թ Ա Տ Ր Ո Ն

Վաղը հինգշաբթի գիշեր ժամը 9ին Հաճի-Բանաքօ, ամառնային թատրոն Պորիսի մէջ արտակարգ ներկայացում մը կայ Վառիէթէ խմբին կողմէն ի նպատակ խմբին դերասաններէն Լեւոն Շաքարեանի և Զօի Մաքրամաթի:

Պիտի ներկայացուին «Սերպիոյ և Պուլկարիոյ պատերազմը» եղբրերգութիւն 5 արար:

«Որմնագիրները» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն մը 3 արար և մէջընդմէջ երգեր ու պարեր:

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐԿ»

(Տպագրական տանքու)

Կարծր Անտաղ . Ոչդիդ կարգ Հաշատար քարձորաքիւն

Ամէն լիզուէ տպագրական տանք և զանազանք՝ գոհացուցիչ գներով:

Հասցէ՝ Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3.

11—25

Հ. Ս. ԷՓՐՈԿԵԱՆ

Պակեւազարդ բնաշխարհիկ քառարակ Այս հոյակապ գործին Բ. պրակն ալ հրատարակուած է:

Ա. պրակը զարդարուած 80 պատկերներով:

Բ. պրակը զարդարուած 91 պատկերներով:

Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախսով կարժէ 3 ֆրանք:

Հասցէ՝

Imprimerie Armenienne St. Lazare

(Italie) Venise

ԽՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ «ՄԻՐՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակազուլի, հարսանեկան հրաւրագիր, մահազգ:

Գինները յոյժ գլխաւորապէս ի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Печатница Хр. П. Войниковъ—Варна.